9259

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«09» 06 2023թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

## ԲՓ № 0104-23

***Ձեռնարկողը՝*** ***«Էգիս Ինթերնեյշնլ» ընկերության հայաստանյան մասնաճյուղ***
***ք.Երևան, Ջեյմս Բրայսի 19/1***

***Գործունեությունը՝ Երևան քաղաքի Շիրակ փողոցի հարևանությամբ ավտոբուսային հավաքակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
***Շենգավիթ վարչական շրջան***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 էջ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ №** 0104-23

«09» հունիսի **2023թ.**

***Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակ փողոցի հարևանությամբ ավտոբուսային հավաքակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***

| | |
|---|---|
| Ձեռնարկող՝ | «էգիս Ինթերնեյշնլ» ընկերության հայաստանյան մասնաճյուղ |
| Փաստաթղթի տեսակը՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն |
| Գործունեությունը՝ | «Բ» կատեգորիա |
| Տեղադրման վայրը՝ | ք.Երևան, Շենգավիթ վարչական շրջան |

***Ներածական մաս.*** Երևանի քաղաքապետարանը նախատեսում է կառուցել Շիրակ փողոցի հարևանությամբ ավտոբուսային հավաքակայանը՝ Երևան ժամանող բնական սեղմված գազով (ԲՍԳ) լիցքավորվող շարժակազմը տեղավորելու համար: Նախատեսվում է, որ երկարաժամկետ հեռանկարում հավաքակայանում կտեղավորվի մինչև 400 ավտոբուս:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, 5-րդ մասի, «3)»-րդ կետի, «դ.» ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նախատեսվող ավտոբուսային հավաքակայանի կառուցման աշխատանքների համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N01022022-01-0068, /ծածկագիրը՝ 01-011-0355-0095/, N22122021-01-0236, /ծածկագիրը՝ 01-011-0355-0093/, N23122021-01-0193, /ծածկագիրը՝ 01-011-0340-0034/, N22122021-01-0433, /ծածկագիրը՝ 01-011-0352-0032/, N22122021-01-0452, /ծածկագիրը՝ 01-011-0355-0094/, N10012018-01-0192, /ծածկագիրը՝ 01-011-0340-0030/, N06052021-01-0239, /ծածկագիրը՝ 01-011-0355-0061/, Երևանի քաղաքապետարանի կողմից՝ 08.04.2022թ. տրված N01/18/-07/2-19871-249 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք):

02543163 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

***Նկարագրական մաս.*** Ավտոբուսային նոր հավաքակայանը կկառուցվի Երևանի հարավ-արևմուտքում՝ Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա-Շիրակի փողոցի փոխհատման հարևանությամբ: Հավաքակայանում տեղակայվելու է 400 ԲՍԳ ավտոբուս տեղավորելու համար՝ հետևյալ բաշխվածությամբ՝ 261 հատ 12 մ երկարությամբ և 132 հատ 18 մ երկարությամբ ԲՍԳ ավտոբուսներ: Նախատեսվելու է 3 հիմնական մուտքեր դեպի ավտոբուսների նոր հավաքակայան Արշակունյաց պողոտայի կողմից և Շիրակի փողոցի կողմից:

Արշակունյաց պողոտայի կողմից ավտեբուսների երթևեկությունը կապահովի 6-րդ փողոց տանող կամուրջը որը կլայնացվի և կհիմնանորոգվի: Լինելու է երկու երթևեկելի գոտի՝ յուրաքանչյուր մուտքի և ելքի համար, քանի որ ավտոբուսների մուտքը և ելքը լինելու է Շիրակի փողոցի երկու ուղղություններով: Բոլոր մուտքերի մոտ նախատեսվելու է կառուցել անցակետեր: Ավտոբուսների մուտքի դարպասը լինելու է RFID կապով:

Ավտոբուսային հավաքակայանը կզբաղեցնի 11,05 հա (110500 քմ), որից՝

1) Կառուցապատման մակերեսը՝ 13782 քմ,
2) Անջրանցիկ տարածքի մակերեսը՝ 86 936 քմ,
3) Կանաչապատ տարածքը՝ 9782 քմ,

Ավտոբուսների կայանատեղին գտնվելու է մեկ հարթության վրա, որտեղ յուրաքանչյուր ավտոբուսի համար նախատեսված է կայանման տարածք:

- 12մ երկարությամբ 261 ավտոբուսի համար նախատեսվում է 5 մ X 15 մ չափի կայանատեղի, երկու կայանված ավտոբուսների հետնամասերի միջև 2մ տարածությամբ՝ «հետընթաց կայանման» ռեժիմով ԲՍԳ դանդաղ լիցքավորման սարքի համար:
- 18մ երկարությամբ 132 ավտոբուսի համար կայանատեղին կլինի 5մ X 21մ չափով թողնելով «միջանցք»՝ նախատեսված «առաջընթաց կայանման» ռեժիմի համար: Ավտոբուսների համար առաջարկվում է 60 աստիճանի անկյունով կայանատեղիներ:
- կայանատեղիի տարածքը ներառում է նաև 6 ԲՍԳ արագ լիցքավորման դիսպենսերներ,
- դանդաղ լիցքավորման ԲՍԳ դիսպենսերներ կայանատեղիի տարածքում՝ գիշերային վերալիցքավորման համար,
- անձնական փոխադրամիջոցների կայանատեղին նախատեսված է անձնակազմի 85 անդամի և այցելուների համար, յուրաքանչյուր կայանակետի մակերեսը՝ 2.5 մ x 5 մ նախատեսված «հետընթաց կայանման» ռեժիմով 90 աստիճանի անկյունով կայանման համար:

Փոխադրամիջոցների ավանդական լիցքավորման համար հիմնական երթուղու երկայնքով կտեղադրվի 2 դիսպենսերով դիզելային վառելիքի լիցքավորման կայան:

ԲՍԳ-ով լիցքավորվող ավտոբուսների համար՝ դիսպենսերների մոտ նախատեսվելու է առանձին տարածք կոմպրեսորի համար (ԲՍԳ վառելիքի համար) և սպասարկողի համար: Լիցքավորման կայանում նախատեսվում է 6 ԲՍԳ դիսպենսեր աշխատանքային ժամերին արագ լիցքավորման համար:

Շիրակի հավաքակայանի համար (400 ԲՍԳ ավտոբուս) նախատեսվում է նվազագույնը 80 տ գազի պահեստավորում: Այն ապահովում է 250 բար ճնշման պայմաններում 500մ$^3$ գազի պահեստավորման հզորություն: Լիցքավորման կայանի տարածքում տեղադրվելու է օդամղիչներ՝ յուրաքանչյուր դիսպենսերի մոտ երկուական նաև լիցքավորման կայանն ապահովված է լինելու ծածկով և հագեցած է լինելու հրդեհաշիջման սարքերով:

Նախատեսվելու է 4 լվացման կետ (մեկ լվացման կետի մակերեսը՝ 7մ X 13մ= 125 մ²)՝ յուրաքանչյուր ավտոբուս շաբաթական մեկ անգամ լվանալու համար: Լվացման կետերի անհրաժեշտ քանակը որոշվել է՝ 1 լվացման կետ 40 ավտոբուսի համար հաշվարկով:

1670 մ² մակերեսով տարածք հատկացվելու է տեխսպասարկման աշխատանքների հսկողության աշխատակազմի գրասենյակի և հարմարությունների համար (մոտ 10 հոգու համար):

Տեխսպասարկման և վերանորոգման սրահների մոտակայքում նախատեսված են սանիտարահիգիենիկ պայմաններ (զուգարաններ, լվացարաններ և այլն):

Նախատեսվելու է մեկ խցիկ պահեստամասերի համար՝ առանձին հատվածներով հին և նոր անվադողերի, նավթի բաքերի, մնացած բոլոր պահեստամասերի և մանրադետալների համար, ինչպես նաև առնվազն մեկ պահեստային տարածք՝ ԲՍԳ-ով աշխատող մեքենաների և դիզելային տրանսպորտային միջոցների համար:

Հավաքակայանի ընդհանուր տարածքից մոտ 500մ² հատկացվելու է վարչական գրասենյակների և շինությունների համար: Վարչական շենքի առաջին հարկում տեղակայվելու են ընդունարանը և անվտանգության ծառայության տարածք: Տարածքում նախատեսվել է՝

- Միացյալ ջրամատակարարման և հրդեհաշիջման համակարգ
- Տնտ-կենցաղային կոյուղի
- Արտադրական կոյուղի
- Անձրևատար կոյուղի
- Ավտոբուսների լվացման և հոսքերի մաքրման (ռեցիրկուլյացիա) համակարգ

Ջրամատակարարման ցանցը օղակած է և միացյալ տնտեսական, խմելու, արտադրական, հակահրդեհային պողպատե ф108 x 4 խողովակներից, բաժանարար հորերով և ≈125-130մ մեկ հիդրանտով և ջրամբարներով:

Կոյուղին և սանիտարական համակարգը կնախագծվի տեղանքին համապատասխան: Տեխսպասարկման մասնաշենքի հատակների լվացման և արտադրական լվացարանների հոսքերը ինքնքհոս եղանակով ուղղվելու են մաքրման տեխնոլոգիական սարքավորում, որտեղ կատարվելու է յուղի և նավթամթերքի անջատում: Մասնաշենքից հոսքերը հեռացվելու են հոսակներով ф150, պատյաններ ունեցող ф150 պոլիվինիլքլորիդե խողովակներով: Մաքրումից հետո հոսքերն ուղղվելու են անձրևատար ցանց:

Անձրևաջրերը 0.3x0.5մ B22.5 բետոնե առուներով, որոնք թափվելու են ջրի կոլեկտորի մեջ, որտեղից հեռացվելու են 2 խողովակաշարերով, որոնք լցվելու են Շիրակի փողոցով անցնող ածրևատարի մեջ:

Ավտոբուսների լվացման հոսքերը 10 ական կետերից ուղղվելու են մաքրման սեկցիաներ, որոնք նախատեսված են սարքավորումների սենյակների տակ: Սեկցիաները երեքն են՝

I սեկցիա- նստվածքային (խոշոր մասնիկների՝ ավազի և ցեխի նստում )

II սեկցիա - նավթի և յուղի անջատում

III սեկցիա - պարզարան

3-րդ սեկցիայից սուզված պոմպով պարզեցված ջրերը մղվելու են ±0,0 մաքրման սարք վերջնական մաքրման և հետագա օգտագործման (ռեցիրկուլյացիա):

Հավաքակայանն ապահովված է լինելու կաթսայատնով: Նախատեսված է իրականացնել կաթսայատուն՝ 8.80x10.80մ չափերով:

Հավաքակայանի մուտքի հատվածում տեղադրվելու են մեծ լուսավորված վահանակներ և մի շարք նշաններ՝ տարածքներ սահմանազատելու և հատուկ վտանգներ նշելու համար:

Հավաքակայանի տարածքն ամբողջ պարագծով ապահովված է լինելու 2,6մ բարձր ցանկապատով, որի ընդհանուր երկարությունը լինելու է 1453մ: Բնակելի տներին մոտ գտնվող պատերի մոտ կիրականացվի կանաչ պատնեշ՝ 2-3 սարքով տնկված ծառերից բաղկացած:

Հողային աշխատանքների ժամանակ իրականացվում են փորման և հանված հողային զանգվածների բեռնման, տեղափոխման և բեռնաթափման աշխատանքներ, հողային աշխատանքների ընդհանուր ծավալը 193700 մ³ է, որից 93199 մ³՝ հանույթ, ներառյալ՝ 24875 մ³ բուսահողի շերտի հեռացում: Շինարարական աշխատանքների արդյունքում առաջացող թափոնները բաժանվում են երկու խմբի՝

Անվտանգ թափոններ

✓ Թափոններ, որոնք առաջացել են շենքերի, շինությունների քանդման աշխատանքների ընթացքում և շինարարության հետ կապված այլ թափոնների,

✓ Ոչ պիտանի հանույթ, որն առաջացել է հողային աշխատանքների արդյունքում, օրինակ՝ հող, ավազ, ապարներ և քարեր,

✓ Շինարարության հետ կապված կոշտ թափոններ՝ մետաղի, փայտի, պլաստմասայի մասերի, դատարկ պարկերի, տարաների (և այլն) և աղբի (կեղտ) տեսքով:

Վտանգավոր թափոններ

✓ Վտանգավոր հեղուկ նյութեր և դրանց թափոններ՝ ներառյալ վառելանյութ, յուղ, քսանյութեր, բետոնաջուր

✓ Ասբեստ պարունակող թափոններ, որոնք կարող են առաջանալ հին բնակելի տների տանիքների քանդման ընթացքում.

Բոլոր առաջացող թափոնների համար շին. հրապարակում նախատեսված են լինելու ժամանակավոր կուտակման հարթակներ, իսկ որոշ թափոնատեսակների համար՝ նաև կոնտեյներներ: Շինարարական աղբը որոշակի քանակներ կուտակվելուց հետո հեռացվելու է քաղաքային աղբավայր: Ամբողջ աղբը կապալառուի կողմից տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից նշանակած աղբավայր:

Տարածքում տնկվելու է 2-3 շարք ծառեր և թփեր հավաքակայանի այն կողմում որոնք հարակից են բնակելի տներին, նաև նախատեսվում է կանչապատել ավտոբուսային հավաքակայանի տարածքը:

Համաձայն կատարված հաշվարկի ծառերի/թփերի հատման արդյունքում բնությանը հասցված վնասի դրամական արտահայտությունը կազմում է՝ 598480 ՀՀ դրամ:

Սույն հաշվետվությունը դիտարկում է թափոնների երկու հիմնական խումբ՝ շինարարության ընթացքում առաջացող թափոններ (ժամանակավոր ազդեցություն) և ավտոբուսային հավաքակայանի հետագա շահագործման ընթացքում առաջացող թափոններ (մշտական ազդեցություն): Այս խմբերից յուրաքանչյուրն իր հերթին դիտարկվում է՝ ըստ թափոնների տեսակի (պինդ և հեղուկ) և վտանգի աստիճանի (վտանգավոր/ ոչ վտանգավոր):

Նյութերի և թափոնների տեսակները և դրանց կառավարման եղանակները մանրամասն նկարագրված են ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական կառավարման պլանում /Թափոնների և նյութերի կառավարման պլանում/:

Բնութագրվող տարածքը գտնվում է արդեն իսկ յուրացված և զարգացած քաղաքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ:

Նախատեսվող գործունեության տարածքում պատմության և մշակույթի հուշարձաններ, ինչպես նաև բնության հուշարձաններ չկան:

Շինարարական աշխատանքների ընթացքում արտանետումների տնտեսական վնասը՝ համաձայն հաշվարկի կկազմի 876944 ՀՀ դրամ:

**Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝**

- շինարարական աշխատանքների ընթացքում փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինարարական հրապարակը կանոնավոր կերպով իրականացվելու է ջրցան: Ջրցանման հաճախականությունը պետք է համաձայնեցվի Ինժեների հետ՝ կախված հողի տեսակից, սեզոնային և եղանակային պայմաններից, սակայն ոչ պակաս, քան աշխատանքային օրվա ընթացքում 3-4 անգամ,
- շինանյութը մատակարարվելու է ամենօրյա սպառման քանակներով՝ շինարարության տարածքում երկար ժամանակ մնալուց, շինհրապարակներում տարածվելուց և աղբի, փոշու և ցեխի աղբյուր դառնալուց խուսափելու համար: Այն նյութը, որը չի մատակարարվում ամենօրյա սպառման քանակով, պահվելու է հատուկ հատկացված պահեստային տարածքում, վերջինս հագեցած է լինելու անհրաժեշտ հարմարություններով՝ պահպանելու անվտանգության և աղտոտման վերահսկման կանոնները՝ կոնտեյներներ, ծածկված պահեստներ, մնացորդների հավաքման կոնտեյներներ և այլն,
- շինարարական մեքենաները համալրված պետք է լինեն համապատասխան խլացուցիչներով և չօգտագործվեն այն մեքենաները և սարքավորումները, որոնք պատշաճ վիճակում չեն,
- շինարարության համար անհրաժեշտ ասֆալտը և բետոնը գնվելու են գրանցված մատակարարներից և բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտացված մեքենաներով,
- կանոնավոր կերպով շինհրապարակից հեռացնել շինարարական թափոններն ու աղբը՝ փոշին և աղբի երկարատև կուտակումը կանխելու համար, խուսափել ծրագրի տարածքից դուրս կուտակումներից, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ երթևեկության և հանրության համար,

Շինարարական աշխատանքների ընթացքում ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան Կապալառու ընկերության կողմից նախատեսված է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, որպես օբյեկտներ դիտարկվել են՝ ջուրը, մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը:

ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված՝ աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հնարավոր ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մշտադիտարկման պլաններում:

Իրականացման միջոցառումները՝ հստակ նախանշում են ներգրավված յուրաքանչյուր կողմի դերն ու պատասխանատվությունը ԲԿՊ-ի իրականացման, մշտադիտարկման /մոնիթորինգի/ և վերահսկողության գործում, ինչպես նաև ԲԿՊ սխեմայում ներկայացված են ժամանակացույցը և իրականացման բյուջեն:

Ընդհանուր առմամբ շրջակա միջավայրի պաշտպանության միջոցառումների համար նախագծային ծավալաթերթով նախատեսված է 18000000 ՀՀ դրամ, աշխատանքային անվտանգության և առողջության համար՝ ևս 18000000 ՀՀ դրամ, կանաչապատման և տարածքի բարեկարգման ծախսերը կազմում են՝ 24081540 ՀՀ դրամ:

***Պատճառաբանական մաս.*** Երևան քաղաքի Շիրակ փողոցի հարևանությամբ ավտոբուսային հավաքակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/

02543183
ՓՈՐՁԱՐԿԱՅԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացվել են չորս հանրային քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Առողջապահության, Արտակարգ իրավիճակների, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Շենգավիթ վարչական շրջանից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, տեղական ինքնակառավարման մարմիններից, որոնց կողմից ներկայացված կարծիքներն ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

## Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել՝
- ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները,
- շրջակա միջավայրի, ինչպես նաև մարդու առողջության, անվտանգության և տեխնիկական անվտանգության ՀՀ-ում գործող նորմերի պահանջները,
- ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերի և բնապահպանական պահանջների կատարումը,
- բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումն ու ժամանակացույցերը:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
- սահմանազատել և ժամանակավոր ցանկապատել շինարարական հրապարակը, անցկացնել լուսավորություն և տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված: Բացառել տարածքում թափոնների բաց այրումը:

4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
5. Նախքան ծառահատման աշխատանքներն իրականացնելն անհրաժեշտ է ձեռք բերել Երևանի քաղաքապետարանի կողմից տրված համաձայնեցումները և թույլտվությունները:
6. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«էգիս Ինթերնեյշնլ» ընկերության հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացված, Երևան քաղաքի Շիրակ փողոցի հարևանությամբ ավտոբուսային հավաքակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Նելլի Մովսիսյան